ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Ինստիտուտի տնօրեն
ԺՈՒԲՈՒԱրամյան
«18» 06.2024 թ.

Ինստիտուտ՝Տնտեսագիտության և բիզնեսի
Ամբիոն՝ Կառավարման և բիզնեսի

Հեղինակ՝ Մկրտիչյան Նարինա Գրիգորիի

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Փոքր և միջին բիզնեսի կազմակերպման հիմունքները

Բակալավրի կրթական ծրագիր՝ Կառավարում

Դասիչ մասնագիտություն՝ 041301.01.6

Դասընթացի անոտացիան

Ժամանակակից աշխարհում շուկայական տնտեսության կարևոր բաղադրիչը փոքր եւ միջին բիզնեսն է, որի զարգացման հետ մեկտեղ ստեղծվում են լրացուցիչ աշխատատեղեր, օպտիմալ կերպով օգտագործվում է տեղական հումքը, ընդլայնվում է սպառողական շուկան՝ համալրվելով նոր ապրանքներով եւ ծառայություններով: Աշխարհի շատ երկրներում փոքր եւ միջին բիզնեսն ապահովում է ՀՆԱ-ի հիմնական մասը՝ գերիշխելով ինչպես ձեռնարկությունների ընդհանուր թվի, այնպես էլ արտադրված ապրանքների եւ մատուցվող ծառայությունների ծավալի վրա:

«Փոքր եւ միջին բիզնեսի կազմակերպում հիմունքներ» դասընթացը գործնական ուղղվածություն ունի և նպաստում է բիզնես կազմակերպելու եւ վարելու մասնագիտական կարողությունների ձևավորմանը՝ գաղափարի մշակումից մինչեւ պետական գրանցում, ինչպես նաև փոքր եւ միջին բիզնեսի արդյունավետ գործունեության կազմակերպում:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է ուսանողին տրամադրել ինչպես տեսական, այնպես էլ գործնական գիտելիքներ ՓՄՁ-ների կազմակերպման եւ կառավարման վերաբերյալ, ինչպես նաեւ ապահովել ձեռք բերված գիտելիքների կիրառման համար անհրաժեշտ բազա:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը փոքր և միջին բիզնեսն է, իսկ առարկան՝ փոքր և միջին բիզնեսի կազմակերպման, կառավարման և զարգացման հիմունքներն ու առանձնահատկությունները:

Դասընթացի մուտքային պահանջները

Ուսանողը պետք է տիրապետի տվյալ դասընթացի հետ փոխկապակցված դասընթացներից ձեռք բերված գիտելիքների և հմտությունների, ունենա վերլուծական կարողություններ:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացն ավարտելուց հետո ուսանողները պետք է ունենան համապարփակ գիտելիքներ ժամանակակից աշխարհում փոքր եւ միջին բիզնեսի էության, դերի և զարգացման

միտումների մասին, ինչպես նաեւ խորը պատկերացում, թե ինչպես կազմակերպել և զարգացնել ՓՄՁ-ները:

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ՝ համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Դասավանդման եղանակները և մեթոդները

Առարկան դասավանդվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների համադրությամբ:

Ուսանողների կողմից կիրականացվեն անհատական/խմբային աշխատանքներ՝ նախապես պատրաստված փոքր նախագծերի տեսքով: Ուսանողներին հնարավորություն կտրվի նաև ինքնուրույն իրականացնել վերլուծություններ ուսումնական նյութը ընդգրկող մի շարք թեմաների շուրջ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է 3 ակադեմիական կրեդիտ (39.8 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 18 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	
1.1.1. Դասախոսություններ	**18**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**18**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	**2**
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	

1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**1,8**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսություններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Փոքր եւ միջին բիզնեսի էությունը, տնտեսական դերը և զարգացման միտումները ժամանակակից աշխարհում:	**4**	**2**	**2**
Թեմա 2. Փոքր և միջին բիզնեսի զարգացման առանձնահատկությեուններները աշխարհի զարգացած և զարգացող երկրներում:	**8**	**4**	**4**
Թեմա 3. Փոքր եւ միջին բիզնեսը Հայաստանի Հանրապետությունում: Ներկա վիճակը եւ կառավարության ՓՄՁ զարգացման քաղաքականությունը:	**8**	**4**	**4**
Թեմա 4. Փոքր եւ միջին բիզնեսի գործունեության կազմակերպչական մեխանիզմները: 4.1. Փոքր եւ միջին բիզնեսի կազմակերպաիրավական ձևերը: 4.2. Փոքր եւ միջին բիզնեսի ստեղծման, իրավական ձևի ընտրության, ձեռնարկության գրանցման և գործունեության լիցենզավորման կարգը: 4.3. Փոքր եւ միջին բիզնեսի կառավարման առանձնահատկությունները:	16	8	8

4.4. ՓՄՁ ձեռնարկություններում կադրերի ձևավորում եւ կառավարում: 4.5. Փոքր եւ միջին բիզնեսի զարգացման ռազմավարություն:			
Ընդամենը	**36**	**18**	**18**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1.

Այս թեմայի շրջանակներում ուսանողներին կտրամադրվի տեղեկատվություն փոքր և միջին բիզնեսի էության, դերի եւ զարգացման ընթացիկ միտումների մասին:

Թեմա 2.

Այս թեմայի շրջանակներում ուսանողներին կտրամադրվի տեղեկատվություն աշխարհի զարգացած և զարգացող երկրներում փոքր եւ միջին բիզնեսի զարգացման առանձնահատկությունների մասին:

Թեմա 3.

Այս թեմայի շրջանակներում ուսանողներին կտրամադրվի տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին բիզնեսի ներկա վիճակի մասին, ինչպես նաև կքննարկվի ՀՀ-ում ՓՄՁ-ների զարգացման պետական քաղաքականությունը:

Թեմա 4.

Այս թեմայի շրջանակներում ուսանողներին կտրամադրվի համապարփակ տեղեկատվություն փոքր և միջին բիզնեսի կազմակերպչական և իրավական ձևերի, ՓՄՁ ձեռնարկություն ստեղծելու կարգի, իրավական ձևի ընտրության, ձեռնարկության գրանցման և գործունեության լիցենզավորման մասին: Կքննարկվեն նաև փոքր և միջին բիզնեսի կառավարման առանձնահատկությունները, ՓՄՁ ձեռնարկություններում կադրերի ձևավորման և կառավարման խնդիրները: Ուսանողները հնարավորություն կունենան

ստանալ գիտելիքներ նաև ժամանակակից պայմաններում փոքր և միջին բիզնեսի զարգացման ռազմավարության վերաբերյալ:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Бутова Т.В., Ерхов М.В. «Власть и бизнес в современном обществе», – М.: Маросейка, 2007. – 264 с.
2. Горфинкель В.Я. «Малый бизнес»: учебное пособие – М.: КНОРУС, 2009, 336 с.
3. Иванов А.К. Современные механизмы поддержки малого предпринимательства //Экономика и управление, 2011г.
4. Карами А., Аналоуи Ф. «Стратегический менеджмент малых и средних предприятий». – М.: 2005., 400 с.
5. Мукосеев Д.В. Экономическая сущность и критерии определения малого предпринимательства, Электронный ресурс, 2012 г.
6. Максимцова М.М., Горфинкель В.Я. «Менеджмент малого бизнеса»: учебное пособие – М.: КНОРУС, 2007. – 269 с.
7. Плотникова О.А. «Малое предпринимательство и его роль в обеспечении развития национальной экономики Российской Федерации». – М.: Моск. гуманит. ун-т, 2006. – 216 с.
8. Суварян А.М., Тевикян А.Р., Мкртичян Н.Г., Манукян А.Х., Сарибекян Л.Б., Хачатрян Л.А. «Основные проблемы развития и экспорта продукции малого и среднего предпринимательства в РА и РФ», Ереван, Издательство РАУ 2017, 340 стр.

Ինչպես նաև դասընթացին առնչվող օրենսդրական և կարգավորող ակտերը: